

ՈՒԺԵՐՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ԱՐԴՅՈՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Արա Մարգարյան

Հոդվածը շարունակում է «Նորավանք» ԳԿՀ ավանդական դարձած «Հայաստան-Տարածաշրջան-Աշխարհ. թվեր և փաստեր» խորագրի հրապարակումների շարքը: Ինչպիսի՞ն է Հայաստանն արդի աշխարհի կարծիքով, որո՞նք են արձանագրված ձեռքբերումները և ձախողումները: Սույն հարցերին հոդվածն անդրադառնում է XX դարի 90-ականների կեսերին ներմուծված ու ներկայումս լայնորեն կիրառվող «ուժեղ», «թույլ» կամ «ձախողված» պետություն որակավորումների տեսանկյունից՝ հիմք ընդունելով միջազգային մի շարք հեղինակավոր կառույցների ու կազմակերպությունների հրատարակումները:

Ներածություն

Վերջին տասնամյակում նոր թափ և ազդեցություն են ձեռք բերել այն կառույցները, որոնք կազմում և հրատարակում են աշխարհի պետությունների (*state*) «ուժեղության», «թուլության» կամ «ձախողման» մասին գնահատականներն ու վարկանիշային աղյուսակները: Դրանց ազդեցությունը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո «թույլ», «ձախողված» կամ «ձախողվող» պետությունները հայտնվեցին ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության ուշադրության կիզակետում: Այսպես, 2002թ. ԱՄՆ «Ազգային անվտանգության ռազմավարությունը» փաստաթուղթն աներկբա նշում է. «թույլ կամ ձախողվող պետությունները մեր ազգային շահերի համար կարող են ներկայացնել նույնքան մեծ վտանգ, որքան ուժեղ պետությունները»¹:

Բացի այդ, պետությունների «թուլության» մասին հրապարակվող որոշ արդյունքներ ներկայումս հիմք են ծառայում աշխարհի զարգացած երկրների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի ու Եվրամիության (ԵՄ), ինչպես նաև Ավստրալիայի, Ճապոնիայի, Կանադայի, Միացյալ Թագավորության, Գերմանիայի և եվրոպական մի շարք այլ երկրների միջազգային հարաբերություններն ու օգնությունն ուղղորդելու համար: Որպես օրինակ նշենք միայն նույն 2002թ. ԱՄՆ ռազմավա-

¹ The National Security Strategy of the United States of America, September 2002. www.whitehouse.gov/nsc/nss.pdf

րական փաստաթղթով նախատեսված Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի (*Millenium Chalange Account*) և համապատասխան կորպորացիայի (*Millenium Chalange Corporation*) ստեղծումն ու գործունեությունը:

«Նորավանք» ԳԿՀ հրատարակումներն անդրադարձել են պետությունների «թուլության» կամ «ձախողման» գնահատականների վարկանիշային որոշ աղյուսակներին և դրանք հրատարակող կազմակերպություններին [1, 2]: Սակայն հայերեն վերլուծական գրականությունում դեռևս բացակայում է այդ կազմակերպությունների գործունեության ու հրապարակվող արդյունքների քիչ թե շատ ամբողջական նկարագիրը: Ստորև փորձ է արվում լրացնել այս բացը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա վարկանիշային աղյուսակները կազմող կազմակերպությունների թիվը ներկայումս գերազանցում է երեք տասնյակը, դրանց բոլորի անգամ թռուցիկ քննումը սույն հոդվածում անհնար է: Ուստի, այստեղ հիմնականում դիտարկվում են այս հարցով զբաղվող առավել ազդեցիկ կազմակերպությունները և փորձագիտական խմբերը, որոնց գործունեությունը, փաստորեն, ձևավորել է պետությունների «թուլության» գնահատման ու վարկանիշային աղյուսակների կազմման ներկա դաշտը:

1. Գնահատման ու վարկանիշային դաշտը

Ելնելով կատարվող ուսումնասիրությունների բնույթից՝ այս կազմակերպությունները կարելի է բաժանել 3 խմբի: Առաջին՝ ամենաազդեցիկ խումբը, այսպես կոչված, *կոնցեպտուալացնողներն* են կամ տեսաբանները, որոնք մշակում են պետությունների «թուլության» կամ «ձախողման» այս կամ այն մոդելը, իրականացնում լայնածավալ վիճակագրական, վերլուծական ու տեսական հետազոտություններ: Հաջորդը զուտ քանակական առումով *գնահատողներն* են, որոնք, հիմնվելով այս կամ այն մոդելի վրա, իրականացնում են պետությունների դասակարգումը: Երրորդ խումբը *կանխատեսողներն* են, որոնք, հիմնվելով պետությունների «թուլության» կամ «ձախողման» իրենց գնահատականների վրա, փորձում են իրականացնել նաև որոշակի քաղաքական կանխատեսումներ: Հաճախ, բայց ոչ միշտ, *կոնցեպտուալացնողները* հանդես են գալիս նաև որպես գնահատողներ ու կանխատեսողներ: Առկա են նաև հակառակի օրինակները:

1.1. Կոնցեպտուալացնողներ

Մեր դիտարկումը ճիշտ կլինի սկսել *Քաղաքական անկայունության հանձնախմբից* (ՔԱՀ, *Political Instability Task Force, PITF*): Այն խնդրո առարկա ուղղությամբ գործող, թերևս, առաջին ու ամենաազդեցիկ կազմակերպությունն է, Չախողված պետությունների հանձնախումբ (*State Failure Task Force*)

անվանմամբ հիմնվել է 1994թ. ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության հետախուզական տնօրինության կողմից (*USA CIA, Directorate of Intelligence*), իր ուսումնասիրություններում հիմնվում էր դեռ 1970-ականներից մեկնարկած աշխարհի երկրների տարատեսակ անկայունությունների մոդելավորման ուղղությամբ ԱՄՆ-ում կուտակված հարուստ փորձի վրա: Ուսումնասիրությունների այս փուլը կարելի է անվանել «լատենտային» կամ ծպտյալ՝ արդյունքների և կիրառվող մեթոդների մասին այդ ժամանակ մամուլում անմիջական տեղեկատվության նվազագույն քանակության պատճառով:

Ուսումնասիրությունների նոր՝ «հրապարակային» փուլի սկիզբ կարելի է համարել 1992-ը՝ ԽՍՀՄ փլուզմամբ պայմանավորված: Այս առումով, առանձնահատուկ է 1994-ը, երբ մամուլում հրատարակվեց ՔԱՀ առաջին հաշվետվությունը՝ նվիրված երկրների «ձախողման» մոդելավորմանը/կանխատեսմանը [3]: Այս աշխատությունում, հավանաբար առաջին անգամ, ձևակերպվեցին «պետությունների ձախողում» և հարակից այլ եզրեր¹: Հաշվետվությունում հանձնախումբը տարբերակում է պետությունների 4 տիպի «ձախողումներ». 1) հեղափոխություններ, 2) էթնիկ պատերազմներ և հակամարտություններ, 3) զանգվածային սպանություններ (գենոցիդ), 4) տարատեսակ ռեժիմային ճգնաժամեր: ՔԱՀ այս հաշվետվությունն ամբողջացնում է 1955-94թթ. ժամանակահատվածում նշված տիպի «ձախողումների» մոդելավորման 113 «դեպք» 0.5 մլն մարդ և ավելի բնակչություն ունեցող աշխարհի բոլոր երկրների համար (բացառությամբ ԱՄՆ-ի, որը դիտարկված է միայն համեմատության համար): Մոդելավորման միավոր (ավելի ճիշտ՝ «դեպք» կամ «դրվագ», *case*) է հանդիսանում տվյալ երկիրը՝ տվյալ թվականին (օրինակ՝ «Հայաստան, 1991»): Յուրաքանչյուր «դեպք» բնութագրվում է 617 տարբեր ցուցիչներով (փոփոխականներ) և ժամանակագրորեն ներառում է նախորդ 2-րդ տարվա ցուցանիշների արժեքները²: Կոնկրետ մոդելավորման արդյունքում «դեպքը» պետք է ընդունի միայն 1 կամ 0 արժեք, այսինքն՝ վերը նշված 4 տիպի կամ «խառը» տիպի ձախողում, կամ ոչ: Օգտագործվել է մոդելավորման երկու մեթոդ՝ ստատիստիկ-լոգիստիկ-ռեգրեսիոն վերլուծություն և ներառ ցանցային վերլուծություն (*neural network analysis*)՝ ցանցի ինտենսիվ «ուսուցանմամբ»՝ էտալոնային կամ վերահսկող «դեպքերի» վրա (*control cases*): Կոնկրետ դեպքի «հաջող» մոդելավորումը, միևնույն ժամանակ, նշանակում է տվյալ մոդելի ունակությունը՝ կանխատեսել կոնկրետ «ձախողման դեպքը», այսպես ասած, «դեպքից երկու տարի առաջ»:

Հայեցակարգային առումով հիմնարար արժեք ունի այս հաշվետվության

¹ Վերլուծական հանրության շրջանակներում դրանք լայն շրջանառության մեջ մտցվեցին ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի (*NIC*) հովանու ներքո 90-ականներից իրականացվող *NIC* 2010, *NIC* 2015, *NIC* 2020 լայնածավալ ծրագրերի կատարման ընթացքում:

² Այսինքն, օրինակ՝ «Հայաստան, 1991» «դեպքը» պարունակում է 1989թ. տվյալներ:

հետևյալ արդյունքը: Հիմնվելով ավելի քան 2 մլն միավոր տեղեկատվության և ավելի քան 300 «ղեկավարի» մոդելավորման արդյունքների վրա՝ ՔԱՀ փորձագետներն առանձնացրել են տվյալ պետության այս կամ այն տիպի ձախողման բարձր հավանականությունն առավելագույնս պայմանավորող «հիմնական» փոփոխականների ցանկը: Դրանք հաշվետվությունում բաժանվում են 4 հիմնական տիրույթների՝ *ժողովրդագրական, տնտեսական, ռեսուրսա-միջավայրային* և *քաղաքական*: Ներառված ցանցային մոդելավորման օգնությամբ իրականացվել է այս փոփոխականներից (արդեն՝ պարամետրերից) մեկ, երկու, մինչև 14 տարբեր պարամետրերի զուգորդումով նկարագրվող առանձին «մոդելների» վարքը: Այնուհետև գնահատվել է տարբեր պարամետրերի կամ դրանց այս կամ այն կոմբինացիայի ազդեցությունը պետությունների տարբեր տիպի «ձախողումների» մոդելավորման/կանխատեսման ճշգրտության վրա: Համաձայն ՔԱՀ հաշվետվության՝ պարամետրերի որոշակի զուգորդությունների համար այս ճշգրտությունը գերազանցել է 70% շեմը, ինչը տպավորիչ արդյունք է ու համարժեք կանխատեսման վկայություն¹: Նկատենք, որ այս աշխատանքների տրամաբանությունը համահունչ է այն ուսումնասիրություններին, որոնք զբաղվում են բարդ դինամիկ համակարգերում «էական» պարամետրերի որոշմամբ և այդ պարամետրերի այն «կրիտիկական» արժեքների հաշվարկմամբ, որոնց դեպքում համակարգերը կորցնում են կայունությունն ու անցնում «քաոսային» և/կամ ստոխաստիկ ռեժիմների²:

Հենվելով այս հաշվետվության տվյալների վրա՝ *Մոյուսակ 1-ում* ամբողջացնում ենք ներառված ցանցերի վրա տարաբնույթ «ձախողման ղեկավարի» մոդելավորման ճշգրտության արդյունքները՝ ըստ դիտարկվող «ղեկավարի» նկարագրող հիմնական պարամետրերի թվի և կազմի: Ինչպես տեսնում ենք այս աղյուսակից, ընդամենը 2 հիմնական պարամետրերի դիտարկումն (տեսակարար ՀՆԱ, առևտրի ազատություն) ապահովում է բոլոր կամ «խառը, համակարգային» ձախողումների մոդելավորման/կանխատեսումների 70%, իսկ զուտ «ռեժիմային ճգնաժամ» տիպի «ղեկավարի» համար՝ նույնիսկ 73% ճշգրտություն:

Ավելին, բերվող արդյունքները վկայում են, որ *3-րդ՝ «ժողովրդավարություն» պարամետրի ավելացումը չի բարձրացնում «համակարգային» ձախողումների մոդելավորման/կանխատեսումների ճշգրտությունը*: Հատկանշական է նաև այն, որ դիտարկվող պարամետրերի թվի ավելացումը չի բարձ-

¹ Իրոք, 50% կանխատեսումային ճշգրտությունը համարժեք է «պատահական» կանխատեսմանը, իսկ, անհասանելի 100% ճշգրտությունը համարժեք է «մարգարեության»:

² Ուսումնասիրությունների այս բնույթը XX դարի 70-ական թվականների «ոչգծային հեղափոխության» ընթացքում մաթեմատիկական (դինամիկ համակարգեր) ու բնագիտական (ֆիզիկա, քիմիա) ասպարեզներում մշակված նոր պարադիգմը, վերլուծական ու հաշվարկային մեթոդները սոցիալ-քաղաքական ու տնտեսական մոդելավորման համար կիրառելու հետևանք է: Երևույթ, որը լայն թափ ստացավ 80-90-ականներին, հատկապես ԱՄՆ-ում (*NATO, DARPA* և այլ կազմակերպությունների ակտիվ ֆինանսավորմամբ), Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում ու Ճապոնիայում: Ցավոք, այս մեթոդները մեծ մասամբ մնացին չուրացված և կիրառություն չգտան հայրենական վերլուծական շրջանակների կողմից:

րացնում զուտ «ռեժիմային ճգնաժամ» դեպքերի մոդելավորման ճշգրտությունը, հակառակը՝ այն նվազում է 73%-ից (2 պարամետրի դիտարկում) մինչև 67% (5 պարամետր) և նույնիսկ 61% (8 պարամետր):

Աղյուսակ 1

Երկրների «ձախողման» մոդելավորման ճշգրտությունը՝ ըստ դիտարկվող պարամետրերի. որոշ արդյունքներ՝ ըստ [3, Anex B, Table B-1]

Ձախողման տիպեր	Մոդելավորման ճշգրտություն	Դիտարկվող հիմնական պարամետրեր	
		թիվը	կազմը
բոլոր	70%	2	տեսակարար ՀՆԱ, առևտրի ազատություն
բոլոր	70%	3	մանուկների մահացություն, առևտրի ազատություն, ժողովրդավարություն
Էթնիկ հակամարտություններ	72%	5	տեսակարար ՀՆԱ, առևտրի ազատություն, ռեժիմի տևողություն, ժողովրդավարություն, <i>youth bulge</i>
ռեժիմային ճգնաժամ	73%	2	տեսակարար ՀՆԱ, առևտրի ազատություն
ռեժիմային ճգնաժամ	67%	5	տեսակարար ՀՆԱ, առևտրի ազատություն, ռեժիմի տևողություն, ժողովրդավարություն, <i>youth bulge</i>

Մինչդեռ, օրինակ, զուտ «Էթնիկ հակամարտությունների» մոդելավորման պարագայում մոտ 70% ճշգրտությունը պահանջում է արդեն 5 հիմնական պարամետրերի դիտարկում: Դրանց թվում է, այսպես կոչված, *youth bulge* պարամետրը, որն այս աշխատությունում սահմանվում է որպես «դեպքից» երկու տարի առաջ տվյալ երկրում 15-29 տարեկան բնակչության թվի հարաբերությունը 30-54 տարեկան բնակչության թվին¹: Հատկանշական է նաև *youth bulge* պարամետրի ցածր կարևորությունը զուտ ռեժիմային ճգնաժամերի կանխատեսման տեսանկյունից: Փաստորեն, բերվող արդյունքներից կարելի է եզրակացնել, որ զուտ էթնիկ հակամարտությունը որոշակի առումով ավելի «բարդ» երևույթ է, քան նույնիսկ բարդ տիպի «համակարգային ճգնաժամերը»:

Չափազանց բնութագրական է, սակայն, այն, որ ՔԱՀ փորձագետներն աշխատության իրենց հիմնական հետևությունը ձևակերպում են հետևյալ կերպ [3]. «մոդելավորման *առավելագույն ճշգրտություն է ապահովում 3 պարամետրերի դիտարկումը*. 1) միջազգային առևտրի ազատությունը, 2) մանուկների մահացությունը, 3) *ժողովրդավարության* մակարդակը: Արդյունքները վկայում

¹ 1970թ. ներմուծված (Գաստոն Բուտուլ) սույն հասկացությունը քննող սակավաթիվ հայերեն ուսումնասիրություններում կարելի է հանդիպել այս եզրի «երիտասարդների ավելցուկ» կամ նույնիսկ «երիտասարդների ուռուցք» ոչ պիտանի և ոչ համարժեք թարգմանություններին:

են, որ դիտարկված բոլոր դեպքերի 2/3-ի համար, դատելով այս 3 պարամետրերից, կարելի է հստակորեն տարբերակել/կանխատեսել «ձախողման» և «չձախողման» դեպքերը՝ դրանից երկու տարի առաջ: Ավելի ժողովրդավար երկրներում «ձախողման» ռիսկը մեծանում է, երբ մանուկների մահացության աստիճանը բարձրանում է, իսկ միջազգային առևտրինը՝ իջնում: Պակաս ժողովրդավարական երկրներում «ձախողման» ռիսկը մեծանում է, երբ միջազգային առևտրի մակարդակը նվազում է, իսկ մանուկների մահացության աստիճանն ունի նվազ ազդեցություն» (տե՛ս [3], գլուխ «*Key Findings*», p. viii):

Այս եզրահանգմամբ է պայմանավորված 1994թ. աշխատության հայեցակարգային կարևորությունը խնդրո առարկա գրեթե բոլոր հետագա ուսումնասիրությունների համար. որոշվեցին և շրջանառության մեջ դրվեցին այն հիմնական պարամետրերը և տիրությունները, որոնցով պետք է գնահատվեն տվյալ պետության «թուլությունը» կամ «ձախողումը»¹:

1998թ. հրատարակվեցին հանձնախմբի ուսումնասիրությունների 2-րդ փուլի արդյունքները [4]: Օգտագործված վերլուծական զինանոցն այստեղ հարստանում է 3-րդ գործիքով՝ «դեպքի» վարքի վերլուծություն՝ այսպես կոչված «գենետիկ ալգորիթմների» միջոցով²: «Ճգնաժամների» գլոբալ մոդելավորումից զատ, հատուկ ուշադրություն է դարձվում Սահարայամերձ պետությունների «ձախողումների» առանձին մոդելավորմանը:

ՔԱՀ այս աշխատությունում վերահաստատվում է հանձնախմբի նախորդ հրատարակման այն հետևությունը, որ դիտարկվող դեպքերի 2/3-ի համար գլոբալ մոդելավորման արդյունքների լավագույն ճշգրտությունն ապահովվում է վերոհիշյալ 3 պարամետրերի դիտարկումով [4]: ՔԱՀ փորձագետների խոսքերով՝ էլ ավելի է ընդլայնվում «*քաղաքական կազմակերպությունների կողմից առաջարկվող*» ժողովրդավարության մակարդակը նկարագրող պարամետրերի օգտագործումը [4, p. 11]: Ըստ այդմ, պետություններն արդեն դասակարգվում են ամբողջական ժողովրդավարությամբ, մասնակի ժողովրդավարությամբ և ավտոկրատիկ բնույթի երկրների: Իսկ «ռեժիմային փոփոխության դեպքերի» մոդելավորման ժամանակ դիտարկվում է հատուկ պարա-

¹ Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ [3]-ը վերլուծական հանրության ուշադրությունը հրավիրեց *youth bulge* պարամետրի վրա՝ հիմք դնելով էթնիկ պատերազմների ու հակամարտությունների վերլուծությանը/կանխատեսմանը նվիրված 90-ականներին և նոր դարասկզբին լույս տեսած բազմաթիվ ուսումնասիրությունների համար:

² Գենետիկ ալգորիթմները (ԳԱ) հնարավորություն են տալիս բարդ օպտիմալացման խնդիրները լուծել, այսպես կոչված, «էվոլյուցիոն» տարբերակով, թեև, ճիշտն ասած, դրանք չեն ապահովում «բացարձակ» օպտիմալ լուծումը: Ի տարբերություն դասական մեթոդների, երբ պարամետրերի փոփոխությամբ որոնվում է օպտիմալ լուծումը, ԳԱ-ն «զարգացնում» է լուծումը 2 սկզբնական լուծումները «զույգելով», որը հիմք է դնում հետագա «ժառանգ» լուծումների շարքին: Լուծումների յուրաքանչյուր «սերնդում» ընտրվում են «լավագույնները», որոնք կրկին «զույգվում» են: [4]-ում կիրառվող ԳԱ-ն թույլ է տալիս մոդելավորել այնպիսի գենետիկ երևույթներ, ինչպիսիք են պարզ ժառանգումը, *մուտացիան* և *քոնս-օվերը*:

մետր, որի միջոցով գնահատվում է «դեպի ժողովրդավարության» կամ «ժողովրդավարությունից» փոփոխության ուղղվածությունը: Այս պարամետրը ներկայացնում է տվյալ պետության «ժողովրդավարության» և «ավտոկրատիայի» ցուցիչների արժեքների պարզ թվաբանական տարբերությունը (մանրամասն տե՛ս [5]):

Բերենք ՔԱՀ այս աշխատության հատկանշական հետևյալ «հիմնական եզրահանգումը». «Մասնակի ժողովրդավար պետություններն ավելի խոցելի են տարատեսակ «ձախողումների» համար, քան ամբողջական դեմոկրատ, ինչպես նաև ավտոկրատ պետությունները: Սա ենթադրում է, որ *դեմոկրատիայի քաղաքականության քաղաքականությունը, վերջին հաշվով, թեև կարող է հանգեցնել կայուն լիբերալ աշխարհի, սակայն չի կարելի ենթադրել, թե անցումային փուլերը կլինեն կայուն: Քաղաքականություն կերտողները (decision makers) պետք է դա հստակ հասկանան*» (ընդգծումը մերն է, տե՛ս [4], *Key Findings*):

Դժվար չէ տեսնել, որ այս եզրահանգումն այն ակունքն է, որից արդի վերլուծական ուսումնասիրություններում, եթե ոչ կոնկրետ ծրագրերում, սերվում է «դեկավարվող քառս» հասկացության աշխարհաքաղաքական կիրառումը, որն այդքան բնորոշ է 90-ականների վերջին և նոր դարասկզբին:

2000թ. սեպտեմբերի վերջին հրատարակվեցին հանձնախմբի աշխատանքների 3-րդ փուլի արդյունքները [6]: Հիմնականում պահպանելով նախորդ փուլերին բնորոշ ընդհանուր նկարագիրը՝ այս փուլի աշխատանքներն առանձնանում են հիմնականում մահմեդական բնակչություն ունեցող երկրների, ինչպես նաև «էթնիկ պատերազմներ» ունեցող երկրների խմբերի առանձին, ավելի մանրամասն մոդելավորմամբ ու դրան ուղղված հատուկ ջանքերով: Ավելի են խորացել դիտարկվող պետությունների «ժողովրդավարության» պարամետրի գնահատականները, ինչպես նաև հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ երկրի վրա *«միջազգային ներազդման»* պարամետրի ազդեցության ուսումնասիրմանը: Ընդ որում, նկարագրելով տարբեր պարամետրերի կիրառման դեպքում առավելագույն ճշգրտություն ապահովող մոդելավորման արդյունքները՝ ՔԱՀ փորձագետները գրում են. «Այն պարագաներում երբ մոդելավորումը տալիս է արդյունքների համանման ճշգրտություն, *հանձնախումբն առավելություն է տալիս այն պարամետրերի դիտարկմանը, որոնք առավելապես հետաքրքիր են քաղաքականություն կերտողների համար*» (ընդգծումը մերն է, տե՛ս [6], *Appendix A*, p. 55):

2003թ. նոյեմբերին և 2005թ. սեպտեմբերին հրատարակվեցին ՔԱՀ IV-րդ և V-րդ փուլերի ուսումնասիրությունների արդյունքները¹: Սակայն մանրա-

¹ Political Instability Task Force Report: Phase IV Findings (McLean, VA: Science Applications International Corporation, November 2003. Political Instability Task Force Report: Phase V Findings (McLean, VA: Science Applications International Corporation, September 2005).

մասն վերլուծության համար դրանց փաստագրական բաժինները նույնիսկ հիմա դժվարհասանելի են մնում:

Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է նշել, որ դատելով անգամ միայն բաց աղբյուրներից՝ աշխարհի երկրների անկայունությունների կամ «ճախողումների» մոդելավորման առումով ՔԱՀ կատարած աշխատանքը՝ հիմնված ուսումնասիրությունների նախորդ, «լատենտային» փուլի արդյունքների վրա, ունի աննախադեպ ծավալ և օգտագործված վերլուծական մեթոդների տպավորիչ զինանոց: Հրատարակված արդյունքները, որոնք, անշուշտ, ստացված բոլոր արդյունքների փոքր մասն են միայն, մշակված մոդելները, «զգայուն պարամետրերի» ցանկերը և ՔԱՀ այլ արդյունքներ տասնամյակների ընթացքում հանդիսացել և շարունակում են հանդիսանալ խնդրո առարկա մեծաթիվ ուսումնասիրությունների ելակետ՝ թե՛ ԱՄՆ-ում, թե՛ այլուր: ՔԱՀ հրապարակումների եզրահանգումները մեծ մասամբ ունեն հավասարակշռված բնույթ, մանավանդ վաղ փուլերի աշխատությունները հնարավորինս զերծ են ներմուծված քաղաքականացվածությունից¹:

Գլոբալ զարգացման կենտրոն (ԳԶԿ, *The Center for Global Development*): Վաշինգտոնյան այս «թինկ թանկը» սկսեց գործել 2001թ. նոյեմբերին՝ սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից ճիշտ երկու ամիս անց: 2004թ. հունիսին ԳԶԿ հովանու ներքո գործող *Թույլ պետությունների և ԱՄՆ Ազգային անվտանգության կոմիտե* (ԹՊԱԱԿ, *Commission on Weak States and U.S. National Security*) երկկուսակցական կոմիտեն հրատարակեց «Անդունդի եզրին. թույլ պետությունները և ԱՄՆ ազգային անվտանգությունը» աշխատությունը [7]: ԳԶԿ նախագահ Նենսի Բրդսալի (*Nancy Birdsall*) նախաբանում ասվում է. «2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունն ահագանգեց զարգացման և անվտանգության տեսանկյունից նոր համատարած մարտահրավերի գալստյան մասին. XX դարում զգայուն ազգային անվտանգությունը պետք է գործ ունենա (*tackle with*) ԱՄՆ-ից հեռու գտնվող որոշ պետությունների թուլության և անգամ փլուզումների հետ» [7, p. V]: Ուշագրավ է այս աշխատության վերաբերյալ «պատմության վախճանի» տխրահոյակ թեզի հեղինակ, Փոլ Նիտցեի անվան միջազգային խորացված ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ Ֆրենսիս Ֆուկույամայի հետևյալ ոգևորված գնահատականը. «Կոմիտեի նոր հաշվետվությունը ողջ խնդիրը ներկայացնում է համարժեք և ձևակեր-

¹ Հավելենք միայն, որ ՔԱՀ [3] աշխատությունում մեր տարածաշրջանը ներկայացված էր 13 «դեպքով», որոնցից 7-ի համար (54%) արձանագրվել է «սխալ» մոդելավորում/կանխատեսում. 4 անգամ Թուրքիայի (1957, 1961, 1965, 1962) և մեկական անգամ «ԽՍՀՄ, 1968» և «Հայաստան, 1991» դեպքերի համար: [4]-ում Կովկասյան հանրապետություններին առնչվող 5 դեպքերն ընդհանրապես մոդելավորված չեն՝ բավարար տվյալների բացակայության պատճառով: [6]-ում գլոբալ մոդելավորման արդյունքներով ճիշտ է մոդելավորված «Հայաստան, 1994» դեպքը: Մահմեդական բնակչությամբ երկրների մոդելավորման ժամանակ սխալ է մոդելավորված «Ադրբեջան, 1991» դեպքը, իսկ էթնիկ պատերազմների մոդելավորման ժամանակ սխալ են մոդելավորված «Ադրբեջան, 1991» և «Վրաստան, 1998» դեպքերը: Միևնույն ժամանակ, ճիշտ են մոդելավորված «ՌԴ, 1991» և «Վրաստան, 1991» դեպքերը:

պում շատ հստակ քաղաքական առաջարկ՝ կաբինետի մակարդակով հիմնել առանձնացված մի մարմին, որը և կհամակարգի [թույլ պետություններին ցուցաբերվող աջակցության] տարբեր տարրերը»¹:

ԳԶԿ այս աշխատությունն ինքնին, իսկ Ֆուկույամայի գնահատականը՝ հատկապես, ընդգծում են պետությունների «թուլության» կամ «ձախողման» գնահատմանն ուղղված ուսումնասիրությունների զարգացման տրամաբանության մեջ նոր փուլի սկիզբը: Այսուհետ այդ ուսումնասիրությունները ոչ միայն պետք է սպասարկեն «քաղաքականություն կերտողներին» ժողովրդավարության քարոզչության և ընդլայնման գործում, այլև անմիջականորեն ներազդեն զարգացած երկրների և առաջին հերթին ԱՄՆ արտաքին օժանդակության ուղղորդմանը: Հիշեցնենք, որ այսպիսի «կիրառական» փուլի հայտնվելը բնավ պատահական չէր, այն բխում էր վերը նշված ԱՄՆ 2002թ. «Ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթի դրույթներից: Դժվար չէ նաև հասկանալ, որ Ֆուկույամայի հիշատակած «կաբինետի մակարդակով գործող առանձնացված մարմինը» 2002թ. նշված ռազմավարական փաստաթղթի ու դրանով պայմանավորված՝ Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի ստեղծման լույսի ներքո, չէր կարող չդառնալ Հազարամյակի մարտահրավերների կորպորացիա, որը և կոչված կլինի այսուհետ «համակարգել թույլ պետություններին ցուցաբերվող աջակցության տարբեր տարրերը»:

[7]-ում դիտարկված են աշխարհի մոտ 70 «թույլ պետություն»: Դիտարկումն իրականացվել է երեք տիրույթներում. անվտանգություն (*security*), ունակություն (*capacity*) և լեգիտիմություն (*legitimacy*): Ընդ որում՝ այս տիրույթներում գնահատումն իրականացվում է միայն մեկ պարամետրով. անվտանգության տիրույթում դա ռազմադաշտում արձանագրված զոհերի թիվն է, ունակությունում՝ տվյալ երկրում մանկական պատվաստումների մակարդակը, լեգիտիմությունում՝ 2003թ. Սթիվեն Ռադելեթի աշխատության արդյունքները² [8]:

Հիմնվելով ստացված գնահատականների վրա՝ ԹՊԱԱԿ փորձագետները կազմել են «թույլ պետությունների» համապատասխանաբար 3 առանձնացված ցանկ: Յուրաքանչյուր ցանկում առկա են երկրների առանձին ենթախմբեր՝ 3 ենթախումբ «անվտանգության» ցանկում և 5-ական ենթախումբ՝ «ունակություն» և «լեգիտիմություն» ցանկերում: Այս ենթախմբերում երկրները ներկայացված են ըստ տվյալ պարամետրի արժեքների 20%-ոց տիրույթների՝ *քվենտիլների*, ընդ որում՝ ստորին քվենտիլներում ներկայացված են առավել «թույլ» երկրները: [7] աշխատության արդյունքներն ամբողջացրել ենք *Աղյուսակ 2*-ում, ուր ընդգծել ենք անդրկովկասյան երեք երկրները:

¹ Francis Fukuyama. The Paul H. Nitze School of Advanced International Studies, Johns Hopkins University. http://www.cgdev.org/section/initiatives/_archive/weakstates

² Այն ներկայացնում է Համաշխարհային բանկի (տե՛ս ստորև), *Freedom House*, *Economist Intelligence Unit*, և *Political Risk Services* կազմակերպությունների համապատասխան գնահատականների հանրագումարը:

Աղյուսակ 2

Ըստ «Անդունդի եզրին. թույլ պետությունները և
ԱՄՆ ազգային անվտանգությունը» 2004թ. աշխատության [7]

Անվտանգություն (ընդամենը 31 երկիր)				
Մեծածավալ պատերազմ		Միջին պատերազմ		Փոքրածավալ պատերազմ
16 երկիր՝ այդ թվում. Հնդկաստան, Պակիստան, Աֆղանստան		7 երկիր՝ այդ թվում. Կամբոջա, Մոմալի		8 երկիր՝ այդ թվում. Տաջիկստան, Ուզբեկստան
Ունակություն (ընդամենը 73 երկիր)				
Վերին 20%	60 – 80%	40 – 60%	20 – 40%	Ստորին 20%
14 երկիր՝ այդ թվում. Հայաստան, Ադրբեջան, Ուզբեկստան	15 երկիր՝ այդ թվում. Վրաստան, Մոլդովա, Տաջիկստան	15 երկիր՝ այդ թվում. Քենիա, Եմեն	15 երկիր՝ այդ թվում. Հնդկաստան, Պակիստան, Սուդան	14 երկիր՝ այդ թվում. Աֆղանստան, Մոմալի
Լեգիտիմություն (ընդամենը 72 երկիր)				
Վերին 20%	60 – 80%	40 – 60%	20 – 40%	Ստորին 20%
15 երկիր՝ այդ թվում. Հնդկաստան, Մոնղոլիա	14 երկիր՝ այդ թվում. Վրաստան, Մոլդովա, Ալբանիա	15 երկիր՝ այդ թվում. Հայաստան, Կամբոջա	14 երկիր՝ այդ թվում. Ադրբեջան, Դրոբադստան, Եմեն	14 երկիր՝ այդ թվում. Աֆղանստան, Ուզբեկստան

Ինչպես տեսնում ենք, «անվտանգության» առումով դիտարկված 31 երկրների շարքում տեղ չի գտել անդրկովկասյան և ոչ մի հանրապետություն: «Ունակության» առումով Հայաստանը և Ադրբեջանը գերազանցում են Վրաստանին, իսկ առավել քաղաքականացված «լեզիտիմության» տիրույթի առումով Վրաստանը գերազանցում է Հայաստանին, որը, իր հերթին, գերազանցում է Ադրբեջանին: 2004թ. այս աշխատությունում չեն դիտարկված Թուրքիան, Իրանը, Իրաքը և ՌԴ-ն: Ավելացնենք, որ [7]-ում չի կազմված ըստ «թուլության» երկրների որևէ դասակարգման վերջնական վարկանիշային աղյուսակ:

Հետաքրքրական է, որ դեռ 2003թ. մարտին, ելույթ ունենալով ԱՄՆ Սենատի արտաքին կապերի կոմիտեում, վերը հիշատակված ԳԶԿ ներկայացուցիչ Ս.Ռադելեթը եզրակացրել էր, որ դատելով հատկապես «լեզիտիմություն» բաղադրիչի, ինչպես նաև կոռուպցիայի աստիճանի գնահատականնե-

րից, Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամից նախկին ԽՍՀՄ հանրապետություններից օժանդակություն կարող է ստանալ միայն Վրաստանը: Ելույթը մեծ ազդուկ բարձրացրեց հարցով զբաղվող մասնագետների և փորձագետների շրջանում, նույնիսկ այն կազմակերպություններում, որոնք ամենայն խստությամբ հետևում են հենց «լեզվիտիմության» և մարդու իրավունքների դաշտին (օրինակ՝ Ա.Սախարովի անվան հիմնադրամ¹ [9]): Հետագա գործընթացների ժամանակ, ոչ վերջին հերթին «Հերիթեջ Ֆաունդեյշն»-ի 2003 և 2004թթ. «Տնտեսական ազատությունների ցուցիչներ» հրատարակումների արդյունքներով (տե՛ս, օրինակ [1, 2]) և մասամբ ԱՄՆ-ում հայկական լոբբիի ջանքերով, հաղթեց ավելի իրատեսական մոտեցումը:

ԹՊԱԱԿ ուսումնասիրությունները թեև գուրկ են վերլուծական խորությունից (մանավանդ եթե դրանք համեմատելու լինենք ՔԱՀ ուսումնասիրությունների հետ) և հայեցակարգային առումով որևէ նորություն չեն պարունակում, սակայն դրանց ընդգծված քաղաքական բնույթը և, ինչն ավելի կարևոր է, բերվող գործնական, կիրառական առաջարկությունները հիմք են տալիս մեզ ԳԶԿ-ն ընդհանրապես, իսկ ԹՊԱԱԿ-ը մասնավորապես դիտարկել «կոնցեպտուալացնողների» շարքում: Այստեղ կատարված(վող) աշխատանքները կարևոր են հատկապես Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի հիմնադրման պատմության և ներկա գործունեության քննման տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, տվյալ երկրի «թուլությունը» գնահատելիս, վերահսկող անալիտիկ վերլուծության/մոդելավորման² բացակայության պարագայում ԹՊԱԱԿ ուսումնասիրություններում դիտարկվող երեք տիրույթներում միայն մեկ պարամետրի օգտագործումը [7] աշխատության լուրջ թերությունն է: Արդյունքում՝ ըստ «թուլության» երկրների անգամ մասնակի դասակարգումները, որոնք իրականացվել են ԹՊԱԱԿ-ի կողմից 2003-04թթ., մասամբ խեղաթյուրված են սուբյեկտիվ գործոններով:

Նման նեղ ուղղվածությունից խուսափում է, օրինակ, *Ռոբերթ Ռոթբերգի (Robert I. Rotberg)* գլխավորած խումբը, որի 5-ամյա ուսումնասիրությունների արդյունքները հրատարակվեցին նույն 2004թ. [10]: Այստեղ օգտագործվել է տնտեսական, քաղաքական և անվտանգության տիրույթների պարամետրերի շատ ավելի լայն ընտրանի: Թեև դիտարկվող պետությունները տարբերակվում են որպես «փլուզված», «ձախողված» և «թույլ», սակայն այստեղ նույնպես բացակայում է դիտարկվող երկրների դասակարգումն ըստ դրանց «թուլության» կամ «ձախողման»: *Հայաստանն այս աշխատությունում «թույլ» կամ «ձախողված» երկրների շարքում*, և ընդհանրապես, *չի դիտարկված*:

ԳԶԿ/ԹՊԱԱԿ [7] աշխատությունը նշանավորեց հիմնականում զարգա-

¹ <http://www.inthenationalinterest.com/Articles/Vol2Issue25/Vol2Issue25Semyonovpfv.html>

² Ինչպես դա արվում է, օրինակ, ՔԱՀ ուսումնասիրություններում:

ցող երկրների «թուլության» գնահատականների գործընթացների հատկանշական միաձուլումը մի շարք զարգացած երկրների միջազգային օգնություն ցուցաբերող պետական կառույցներում իրականացվող կոնկրետ ծրագրերի ձևավորման և ուղղորդման համար տարվող աշխատանքների հետ: Միաձուլում, որը կարելի է և անհրաժեշտ է դիտարկել որպես «դեմոկրատիայի ընդլայնման» ռազմավարության բաղկացուցիչ մաս:

Այսպես, Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման դեպարտամենտի (ՄԹՄԶ, *DFID*) 2005թ. հրատարակած հաշվետվությունում դիտարկվում էին այսպես կոչված «փխրուն» 46 պետություններ (*fragile states*), այդ թվում՝ Վրաստանը և Ադրբեյջանը, *բայց ոչ Հայաստանը* [11]: Ընդ որում՝ ՄԹՄԶ փորձագետները «փխրունությունը» ձևակերպում են որպես տվյալ պետության կամք և ունակություն՝ սեփական ու միջազգային միջոցներն օգտագործելու հասարակության համար անվտանգություն, սոցիալական պաշտպանվածություն (*social welfare*), տնտեսական զարգացում և լեգիտիմ քաղաքական կառույցներ ապահովելու ուղղությամբ: Հաջորդ՝ 2006թ. օգոստոսին Կանադայի Միջազգային զարգացման գործակալության (ԿՄԶԳ, *Canadian International Development Agency*) հովանու ներքո գործող *Դևիդ Կարմենթի* (*David Carment*) ղեկավարած հանձնախումբը հրապարակեց «թույլ» պետությունների իրենց ցանկը [12]: Այստեղ երկրները դիտարկվում էին 10 տիրույթներին պատկանող 74 պարամետրերի հիման վրա: Համաձայն այս հանձնախմբի՝ տվյալ երկրի «թուլությունը» գնահատվում է «իշխանություն» (*authority*), «ունակություն» (*capacity*) և «լեգիտիմություն» (*legitimacy*) երեք հիմնական տիրույթներում, պետության հիմնական գործառնությունների իրականացման մակարդակով: *Հայաստանը*, ի տարբերություն Վրաստանի, այս աշխատությունում *դիտարկված չէ*: Կարլետոնի համալսարանում (*Carleton University, Canada*) այս խմբի ավելի ուշ իրականացրած ուսումնասիրություններում դիտարկված են Վրաստանը և Ռուսաստանը (2004թ.), Կոսովոն և ՌԴ Կալինինգրադի մարզը (2006թ.):

Վերջապես, նույն 2006թ. ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ, *US AID*) պատրաստած «Չափել պետությունների թուլությունը» աշխատությունում առաջարկվում էր դասակարգել «փխրուն պետություններն» ըստ 33 պարամետրերի [13]: Դրանք բնութագրում են տվյալ պետության *արդյունավետությունը* և *լեգիտիմությունը* գործունեության չորս տիրույթներում. տնտեսական, քաղաքական, անվտանգության և սոցիալական: Ընդ որում՝ պետության *արդյունավետությունը* բնութագրվում է որպես կառավարության՝ հասարակությունում կարգ ու կանոն ապահովելու և հանրային հիմնական ծառայությունները մատակարարելու ունակությունը: Պետության *լեգիտիմությունը* բնութագրվում է որպես հասարակության կարևոր հատվածների

կողմից գործադիր իշխանությունն ընդունելիորեն արդար և ողջ ազգի շահերից կիրառելու ընկալումը: Ուսումնասիրվող երկրները դիտարկվում են այս (2 x 4) բանաձևն ունեցող «փխրությունության մատրիցի» տեսանկյունից [13, p. 4]: Այնուհետև, համաձայն ստացված գնահատականների, դիտարկված բոլոր «փխրություն պետությունները» դասակարգվում են երեք ենթախմբերի. «ձախողվող» (*failing*), «ձախողված» (*failed*) և «ապաքինվող» (*recovering*) պետությունների:

Հայեցակարգային առումով ուսումնասիրությունների և գնահատումների այս փուլի թերևս ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ պետությունների «թուլության» գնահատականներում զուտ ժողովրդավարական ցուցիչների կիրառումն ընդլայնվում է ընդհուպ մինչև «լեգիտիմություն» հասկացությունը: Վերջինիս սահմանումից հասկանալի է, որ այն ավելի ընդգրկուն հասկացություն է, քան, օրինակ, ժողովրդավարական ինստիտուտների բնականոն գործունեությունը [13]: Առավել ցայտուն դա կարելի է տեսնել ընտրությունների օրինակով՝ ընտրությունների կանոնավոր առկայությունը, դրանց միջազգային հանրության համար ընդունելի մակարդակով անցկացումն այլևս բավարար չեն: Անհրաժեշտ է, որ արդյունքները լինեն ընդունելի տվյալ երկրի «հասարակության կարևոր հատվածների կողմից»:

Վերը նշված Միջազգային զարգացման գործակալություններն այդ երկրների կառավարությունների պաշտոնական գործակալություններն են: Ուստի, իրենց հրապարակումներում նրանք պետք է պահպանեն «քաղաքական կոռեկտությունը»: Դրա հետևանքով բաց աղբյուրներում այդպես էլ չհրապարակվեցին այս ծրագրերի «փխրուն» կամ «թուլ» պետությունների ամբողջական վարկանիշային ցանկերը: Նշված գործակալություններն այս ուղղությամբ իրենց աշխատանքները դադարեցրին 2006-07թթ.՝ պետությունների «թուլության» կամ «փխրությունության» գնահատումների դաշտը թողնելով հասարակական կազմակերպություններին, համալսարաններին և այլ մտավոր կենտրոններին:

Դրանցից առաջին հերթին նշենք Ա.Գհանի (*Ashraf Ghani*) կողմից ղեկավարվող բրիտանա-ավստրալական փորձագիտական խումբը [14], վերը հիշատակված Դ.Կարմենթի փորձագետների խումբը Կանադայից, ՔԱՀ նախկին առաջատար փորձագետներ Մ.Մարշալի և Ջ.Գոլդսթոնի (*Monty Marshall, Jack Goldstone*) խումբը ԱՄՆ Ջորջ Մեյսոնի համալսարանում [15] և *Fpniophiqu* հաստատությունը (*The Brookings Institution*, մանրամասն տե՛ս ստորև): Կանխատեսումային դաշտում առաջին հերթին նշենք *Ազատության հիմնադրամը* (*Fund for Peace*, մանրամասն տե՛ս ստորև) և *ԱՄՆ Մերիլենդի համալսարանի Միջազգային զարգացման և կոնֆլիկտների կառավարման կենտրոնը* [16]:

«Կոնցեպտուալացնողների» դիտարկումն ավարտենք խնդրո առարկա ուսումնասիրություններում ներկայումս չափազանց ազդեցիկ *Համաշխար-*

հային բանկով (ՀԲ): Անցած տասնամյակի ընթացքում և ներկայումս պետությունների «թուլությունը» գնահատող գրեթե բոլոր կազմակերպությունները թե՛ ԱՄՆ-ում, թե՛ այլուր լայնորեն օգտագործում են ՀԲ կողմից պետությունների 4 տիրույթները (տնտեսական մենեջմենթ, կառուցվածքային, սոցիալական և հանրային քաղաքականություններ) բնութագրող 16 պարամետրերի գնահատման աղյուսակները, որոնք կանոնավոր կերպով հրատարակվում են տվյալ երկրի քաղաքական և ինստիտուցիոնալ գնահատում (ԵՔԻԳ, *Country Policy and Institutional Assessment, CPIA*) հաշվետվություններում:

Աղյուսակ 3

Համաշխարհային բանկ. ԵՔԻԳ գնահատականները 2006թ.

ՀԲ ԵՔԻԳ տիրույթներ	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
Տնտեսական մենեջմենթ (3 պարամետրեր)	5.3	4.5	4.5
Կառուցվածքային քաղաքականություն (3 պարամետրեր)	4.0	4.2	3.5
Սոցիալական քաղաքականություն (5 պարամետրեր)	4.2	4.1	3.6
Հանրային սեկտորի քաղաքականություն (5 պարամետրեր)	3.7	3.7	3.2
ՄՁԱ ՄՏՑ	4.31	4.12	3.70
ՀԲ ԵՔԻԳ վարկանիշային կարգը դիտարկված 77 երկրների շարքում	1	2	19

Մեզ հետաքրքրող ենթատեքստում դրանք կազմվում են *ՀԲ ցածր եկամուտներով Սթրեսային երկրների նախաձեռնություն* խմբի կողմից (ՀԲ ՑԵՍԵՆ, *WB Low Income Countries Under Stress Initiative, WB LICUS*), որը ներկայումս անվանվում է *Փխրուն և կոնֆլիկտներից ներազդված երկրներ հանձնախումբ* (ՀԲ ՓԿՆԵ, *World Bank's Fragile and Conflict-Affected Countries Group*): Աղյուսակ 3-ում բերված են ՀԲ պաշտոնական կայքում ներկայումս տեղակայված ՀԲ ՑԵՍԵՆ ցածր եկամուտներով աշխարհի 77 երկրների ԵՔԻԳ տիրույթների 2006թ. միջին գնահատականները՝ առանձնացված մեր տարածաշրջանի երկրների համար¹: Ինչպես տեսնում ենք այս աղյուսակից, ՀԲ ՑԵՍԵՆ ցածր եկամուտներով աշխարհի 77 երկրների շարքում *Հայաստանը գրավում է առաջին վարկանիշային տեղը*: Վրաստանը և Ադրբեջանը զբաղեցնում են 2-րդ և 19-րդ տեղերը համապատասխանաբար: Ի սկզբանե, այս 16

¹ <http://go.worldbank.org/S2THWI1X60>. Իրանը, Թուրքիան և ՌԴ-ն չեն դիտարկվում ՀԲ ՑԵՍԵՆ երկրների խմբի մեջ: 2008թ. մայիսի դրությամբ նշված կայքում ԵՔԻԳ միակ ամբողջական տվյալները հասանելի են միայն 2006 թվականի համար:

պարամետրերի ընդհանրացված գնահատականը՝ այսպես կոչված ՄՁԱ Միջոցների տրամադրման ցուցիչը (ՄՁԱ ՄՏՑ, *IDA Resource Allocation Index, IRAI*, տե՛ս *Աղյուսակ 4-ի* նախավերջին տողը), օգտագործվել և շարունակում է օգտագործվել ՀԲ-ի կողմից՝ դասակարգելու համար այն երկրները, որոնք իրենց «թուլության» հետևանքով իրավասու են ստանալ ՀԲ կառույցներից մեկի՝ Միջազգային զարգացման ասոցիացիայի (ՄՁԱ, *International Development Association, IDA*) փափուկ ֆինանսական օժանդակությունը:

Նախկինում Հայաստանն իր ԵՔԻԳ ՄՁԱ ՄՏՑ արժեքների համաձայն կարող էր ստանալ այս օժանդակությունը: 2006-ից Հայաստանն իր ՄՁԱ ՄՏՑ 4.31 արժեքով գնահատվում է շատ ավելի «ուժեղ» երկիր, քան դա թույլատրելի է ՄՁԱ միջոցների ստացման համար:

Հենվելով ԵՔԻԳ գնահատականների վրա՝ ՀԲ ՓԿՆԵ հանձնախումբը 2007թ. վերջին կազմել է աշխարհի ցածր եկամուտներով առավել «փխրուն» 35 երկրների ցանկը¹: Այս ցանկում երկրներն՝ ըստ իրենց ՄՁԱ ՄՏՑ արժեքների, դասակարգվում են 3 խմբերի. «ծայրաստիճան փխրուն» (10 երկիր, ՄՁԱ ՄՏՑ 2.50 և ավելի ցածր գնահատականներով), «հիմնականում փխրուն» (16 երկիր, 2.60-ից մինչև 3.00 գնահատականներով) և «սահմանային փխրուն» (9 երկիր, 3.10-ից մինչև 3.20 գնահատականներով): Հասկանալի է, որ կովկասյան և ոչ մի հանրապետություն այս ցանկում ներառված չէ: Նախկին ԽՍՀՄ միակ երկիրն այստեղ Ուզբեկստանն է՝ ՄՁԱ ՄՏՑ 3.0 արժեքով:

Պետությունների «թուլությունը» գնահատող ներկայիս փուլի համար, բացի ՀԲ ԵՔԻԳ գնահատականներից, չափազանց լայն կիրառում են ստացել ՀԲ-ի կողմից հրապարակվող այլ ցուցիչներ և պարամետրեր: Այս առումով հատկապես մեծ դերակատարում ունեն ՀԲ *World Development Indicators, Governing Matters VI* և *Doing Business* աղբյուրները:

1.2. Գնահատողներ

Վերջին տարիներին սրընթաց աճում է պետությունների «թուլությունը» գնահատող կազմակերպությունների, կառույցների ու տարատեսակ փորձագիտական խմբերի թիվը: Դրանք սովորաբար գործում են ԱՄՆ, Արևմտյան Եվրոպայի, Ճապոնիայի, Կանադայի կամ Ավստրալիայի որևիցե հեղինակավոր համալսարանի, մտավոր կենտրոնի և/կամ այսպես կոչված «կիսապետական» հասարակական կազմակերպության հովանու ներքո: Իրենց աշխատանքներում «գնահատողները» հիմնականում հենվում են «կոնցեպտուալացնողների» և մի շարք այլ կազմակերպությունների (*Հերիթջ Ֆաունդեյշն, Ֆրիդրմ Հաուզ, Թրանսփարենսի Ինթերնեյշնլ, ՄԱԿ, ՀԱԿ, ՀՊԿ* և այլն) կողմից արդեն իսկ կատարված տարատեսակ պարամետրերի գնահատականների վրա:

¹ <http://siteresources.worldbank.org/INTLICUS/Resources/FY07LICUSListSept.doc>

«Գնահատողների» դիտարկումը սույն հոդվածում սահմանափակենք մեկ բնորոշ օրինակով: Դա հայտնի *Բրուքինգս հաստատությունն է (The Brookings Institution)*, ԱՄՆ, թերևս, հնագույն «կիսապետական» հասարակական կազմակերպությունը՝ հիմնադրված դեռ 1916թ. Ռոբերթ Ս. Բրուքինգսի կողմից՝ Կառավարական հետազոտությունների ինստիտուտ անվանումով (*Institute for Government Research*): Իր պաշտոնական կայքում¹, ի թիվս այլ ձեռքբերումների, հաստատությունը հպարտորեն հիշատակում է այն «էական դերակատարումը», որն ունեցավ հաստատությունը ուղիղ 60 տարի առաջ՝ 1948թ. ԱՄՆ Սենատում «Մարշալի պլանի» վավերացման գործում², սենատոր Վանդերբերգի համար պատրաստելով հայտնի հաշվետվությունը:

2008թ. մարտին հրատարակվեց Բրուքինգս հաստատության կողմից կազմված «Ձարգացող աշխարհի պետությունների թուլության ցուցիչները» աշխատությունը (*Index of State Weakness in the Developing World*), ուր դիտարկված է 141 պետություն [17]: Հեղինակների խոսքերով՝ այս աշխատության հիմնական նպատակն է «ԱՄՆ-ում և այլուր միջազգային քաղաքականությունը կերտողներին տրամադրել խնդրո առարկա ուղղությամբ պարզ, համարժեք ու հասկանալի մի գործիք, որը պաշտոնյաներին թույլ կտա ճիշտ և արդյունավետ օգտագործել միջոցները և ուշադրությունը՝ զարգացող երկրների թուլությամբ պայմանավորված մարտահրավերների ընդունման գործում»³: Դրանց «թուլությունը» գնահատվում է 20 պարամետրերի միջոցով, որոնք խմբված են 4 տիրույթներում՝ տնտեսական, քաղաքական, անվտանգության և սոցիալական ապահովության, յուրաքանչյուրում՝ 5-ական պարամետր: Դիտարկված 20 պարամետրերից 12-ը ՀԲ տարբեր կառույցների կողմից գնահատվող պարամետրերն են, մեկական պարամետր վերցված է ՄԱԿ, *Ֆրիդլանդ Զաուգ*, վերը դիտարկված ՔԱՀ և այլ կազմակերպությունների գնահատականներից: Հիմնվելով այս պարամետրերի գնահատականների վրա՝ հաշվարկվում է տվյալ երկրի «թուլության» ցուցիչը (ԹՅ)՝ 0.00-ից 10.00-ը արժեքային տիրույթում: Ընդ որում՝ որքան բարձր է ԹՅ արժեքը, այնքան «ուժեղ» է գնահատվում տվյալ երկիրը:

Այնուհետև, ըստ իրենց ԹՅ արժեքների, բոլոր 141 երկրները ներկայացվում են մեկ ընդհանուր վարկանիշային աղյուսակում, ուր կատարվում է լրացուցիչ դասակարգում ըստ 6 խմբերի. «ձախողված» երկրներ, «կրիտիկա-

¹ www.brookings.edu/about/marshallplan.aspx

² Այս առումով հետաքրքիր է համեմատել դրանք «Մարշալի պլանի» գաղափարական կերտողի՝ Ջ. Քենանի կծու խոսքերի հետ՝ սենատոր Վանդերբերգի և ընդհանրապես ԱՄՆ Սենատի հասցեին (տե՛ս *George Kennan, Memoirs: 1925–1950. Boston 1967, Ch. 17*).

³ Ուշագրավ է այս հաստատության կայքի (www.brookings.edu/reports/2008/02_weak_states_index.aspx) այն ծանուցումը, որում հայտնվում է, թե «սույն հրապարակումը չի հանդիսանում «Օբաման ԱՄՆ ժողովրդի համար» նախագահական նախընտրական քարոզչության բաղկացուցիչ մաս: Բանն այն է, որ հեղինակներից մեկը (*Susan E. Rice*) դեմոկրատ թեկնածու Բ. Օբամայի թիմի հասարակական հիմունքներով աշխատող խորհրդականն է:

պես թույլ» երկրներ, «թույլ», «զգոնություն պահանջող», «ոչ թույլ» և «ուժեղ» երկրներ: Աղյուսակ 4-ում առանձնացրել ենք մի հատված [17]-ում բերվող վարկանիշային աղյուսակից, ուր առկա են մեր տարածաշրջանի բոլոր 6 երկրները, ինչպես նաև բոլոր 6 խմբերին պատկանող երկրների օրինակներ:

Աղյուսակ 4

Ձարգացող աշխարհի «թույլ» պետությունները:

Ըստ The Brookings Institution 2008 [17]

Կարգ	Երկիր	Ընդհանուր ԹՅ	Որակավորումը
1	Սոմալի	0.52	Ձախողված երկրներ
4	Իրաք	3.11	Կրիտիկապես թույլ երկրներ
35	Թուրքմենստան	5.27	Թույլ երկրներ
65	ՌԴ	6.2	Զգոնություն պահանջող թույլ երկրներ
66	Իրան	6.25	
80	Ադրբեջան	6.54	
90	Վրաստան	6.99	Ոչ թույլ երկրներ
98	Թուրքիա	7.18	
105	Հայաստան	7.34	
107	Ուկրաինա	7.38	
141	Սլովակիա	9.41	Ուժեղ երկրներ

Ինչպես տեսնում ենք, դիտարկված երկրներից ամենաուժեղն է Ճանաչվել Սլովակիան՝ ԹՅ 9.41 արժեքով, իսկ գրեթե լիապես «ձախողված» երկիր է Սոմալին՝ ԹՅ 0.52 արժեքով: Մեր տարածաշրջանի երեք երկիր՝ ՌԴ-ն, Իրանը և Ադրբեջանը, գտնվում են «զգոնություն պահանջող» թույլ երկրների խմբում՝ 65-80 կարգային տիրույթում: Վրաստանը, Թուրքիան և Հայաստանը գտնվում են «ոչ թույլ» երկրների խմբում, 90-105 կարգային տիրույթում: Այսպիսով, համաձայն այս գնահատականների՝ Հայաստանն իր ԹՅ 7.34 արժեքով հանդիսանում է մեր տարածաշրջանի «ամենաուժեղ» երկիրը: Ավելին, տվյալների մի փոքր մանրամասն գնումը վկայում է, որ Հայաստանն ըստ իր ԹՅ «տնտեսական» բաղադրիչի գնահատականի (7.97)՝ էականորեն գերազանցում է ոչ միայն իր տարածաշրջանի երկրներին, այլև «ոչ թույլ» երկրների խմբի բոլոր 27 մյուս երկրներին: Այն նույնիսկ գերազանցում է «ուժեղ» երկրների միջին խմբային արժեքը (7.64): Պատկերը գրեթե նույնն է նաև ԹՅ «անվտանգության» բաղադրիչով. ըստ Բրուքինգս հաստատության գնահատականների՝ Հայաստանը տարածաշրջանի ամենաանվտանգ երկիրն է և իր այս «տիրույթի» գնահատականով գերազանցում է խմբային միջին արժեքը: Իսկ ԹՅ «քաղաքա-

կան» բաղադրիչով Հայաստանը թեև աննշան չափով գերազանցում է միջին տարածաշրջանային գնահատականը, սակայն էականորեն զիջում է խմբային միջին գնահատականին:

Հայաստանի և տարածաշրջանի երկրների բերված գնահատականները բնորոշ են խնդրով զբաղվող տարբեր մայրցամաքներում գործող մոտ մեկ տասնյակ «գնահատող» կազմակերպությունների վերջին 5 տարիների արդյունքների համար: Այս առումով որոշակի բացառություն են կազմում գերմանական Բերթելսման հիմնադրամ (*Bertelsmann Stiftung*) կազմակերպության 2008թ. արդյունքները՝ հրապարակված «Բերթելսմանի անցումային ցուցիչները, 2008թ.» աշխատությունում¹ (ԲԱՑ 2008թ., *Bertelsmann Transformation Index 2008*): Հիմնադրամի փորձագիտական խմբում ընդգրկված են Գերմանիայի առաջատար համալսարանների (Մյունխենի, Համբուրգի, Հեյդելբերգի, Թրիրի, Բոնի, Բեռլինի և այլն) և «կիսապետական» կառույցների (*GTZ, DIHK, GDI* և այլն)² ներկայացուցիչները: Նշված աշխատությունը «անցումային» երկրների վարկանիշային աղյուսակները կազմելու հիմնադրամի 2-րդ փորձն է (առաջինը՝ 2006թ.): «ԲԱՑ 2008թ.»-ում դիտարկված է 121 երկիր, որոնց գնահատումը իրականացվում է «Ժողովրդավարություն» և «շուկայական տնտեսություն» հիմնական տիրույթներում՝ չմանրամասնեցված պարամետրերի քննամամբ և չներկայացված մեթոդիկայի կիրառմամբ: Բացակայում է նաև ելակետային աղբյուրների նկարագիրը: Հիմնվելով նշված տիրույթների գնահատականների վրա՝ դրանց պարզ միջինացմամբ կազմվում է տվյալ երկրի «Բերթելսմանի անցումային ցուցիչը» (ԲԱՑ), համաձայն որի՝ երկիրը գրավում է համապատասխան կարգային տեղը վարկանիշային ընդհանուր աղյուսակում: Աղյուսակ 5-ում բերված են «ԲԱՑ 2008թ.» արդյունքները մեր տարածաշրջանի 6 երկրների համար:

Աղյուսակ 5

Բերթելսմանի հիմնադրամ. 2008թ. անցումային ցուցիչները

Երկիր	Կարգը	ԲԱՑ	Ժողովրդավարություն	Շուկայական տնտեսություն
Թուրքիա	32	7.17	7.05	7.29
Վրաստան	38	6.6	6.85	6.36
Հայաստան	41	6.41	6	6.82
ՌԴ	59	5.94	5.35	6.54
Ադրբեջան	87	4.51	3.8	5.21
Իրան	101	3.96	3.73	4.18

¹ www.bertelsmann-transformation-index.de

² Deutsche Gesellschaft für Technische Zusammenarbeit GmbH (GTZ), Eschborn; Association of German Chambers of Industry and Commerce (DIHK), Berlin; German Development Institute (GDI), Bonn.

Ինչպես տեսնում ենք, Հայաստանն այստեղ 3-րդն է՝ էականորեն առաջ անցնելով Ռուսաստանից, Ադրբեջանից և Իրանից, զիջելով, սակայն, Վրաստանին և Թուրքիային: Միանգամայն հասկանալի (բայց ոչ ընդունելի) արդյունք՝ հաշվի առնելով գերմանա-թուրքական ավանդական կապերը և Վրաստանի համար մեր տարածաշրջանում Գերմանիայի «կուրատորի» դերակատարումը Եվրամիության կողմից: Նկատենք, որ անգամ այս արդյունքներով Հայաստանի «շուկայական տնտեսություն» տիրույթի գնահատականը (6.82) շոշափելիորեն գերազանցում է Վրաստանի և գրեթե մոտենում է Թուրքիայի գնահատականներին:

1.3. Կանխատեսողներ

Թեև խնդրո առարկա ուղղությամբ «կանխատեսողների» թիվը ներկայումս զիջում է «գնահատողների» թվին, սակայն այն բավական մեծ է՝ սույն հոդվածի շրջանակներում քիչ թե շատ մանրամասն քննման համար: Ուստի, սահմանափակվենք դրանցից թերևս *ամենահայտնիով՝ Ազատության համար հիմնադրամով* (ԱՀՀ, *The Fund for Peace*), որը *Foreign Policy* ամսագրում ամեն տարի տպագրում է զարգացող և զարգացած պետությունների «թուլության» իր վարկանիշային աղյուսակները (*Failed States Index*): Գնահատումն այստեղ իրականացվում է 12 պարամետրերի (բաղադրիչների) միջոցով, որոնք խմբված են 5 տիրույթներում. *սոցիալական* (2 պարամետր), *հումանիտար արտակարգ իրավիճակներ* (*Complex Humanitarian Emergencies*, 2 պարամետր), *տնտեսական* (2 պարամետր), *քաղաքական* (3 պարամետր) և *մարդու իրավունքներ* (3 պարամետր): Այս պարամետրերի հիման վրա գնահատվում է տվյալ պետության «թուլություն» ցուցիչը (ԹՑ): Ընդ որում՝ առավել կայացած, «ուժեղ» երկրները հավաքում են ամենաքիչ միավորները և վարկանիշային աղյուսակում զբաղեցնում ստորին հատվածները:

«Նորավանք» ԳԿՀ հրատարակումներում արդեն առիթ ունեցել ենք մանրամասնել ԱՀՀ 2006թ. արդյունքները մեր տարածաշրջանի 6 երկրների համար (տե՛ս, օրինակ, [2]): *Աղյուսակ 6-ում* դրանք համեմատում ենք ներկայումս (2008թ. մայիս) ԱՀՀ պաշտոնական կայքում¹ հասանելի 2007թ. տվյալների հետ: Ինչպես տեսնում ենք այս աղյուսակից, 2007թ. գնահատականներով, արդեն 177 երկրների շարքում Հայաստանը ոչ միայն պահպանել, այլև ամրապնդել է մեր տարածաշրջանի «ամենաուժեղ» երկրի առաջատարի կարգավիճակը՝ իր ԹՑ գնահատականի տարբերությունն ավելացնելով վարկանիշային աղյուսակներում ստորին անմիջական հարևան Թուրքիայից (2006թ. 2.9-ի փոխարեն՝ 4.6 միավոր 2007թ.): Որոշակիորեն բարելավվել է ՌԴ դիրքը, իսկ Ադրբեջանի, Իրանի և Վրաստանի պարագաներում զբաղեցված է որոշակի նահանջ:

¹ http://www.fundforpeace.org/web/index.php?option=com_content&task=view&id=99&Itemid=140

Աղյուսակ 6

ԱՀՀ Failed States Index 2006 և 07թթ. գնահատականները

2006թ. , 148 երկրներ			2007թ. , 177 երկրներ		
կարգը	Երկիր	ԹՅ	կարգը	Երկիր	ԹՅ
89	Հայաստան	71.5	112	Հայաստան	70.3
82	Թուրքիա	74.4	92	Թուրքիա	74.9
61	Ադրբեջան	81.9	62	ՌԴ	81.2
60	Վրաստան	82.2	62	Ադրբեջան	81.2
53	Իրան	84	58	Վրաստան	82.3
43	ՌԴ	87.1	57	Իրան	82.8

ԱՀՀ տվյալների ավելի մանրամասն գնումը վկայում է, որ 2006թ. համեմատ բարելավում է արձանագրված 2007թ. Հայաստանի ԹՅ բաղադրիչներից 6-ում (ժողովրդագրական ճնշում, մարդկանց տեղաշարժ, տնտեսության անկում, պետության քրեականացում և ապօրինականացում, հասարակական ծառայությունների վատթարացում, անձի իրավունքների ոտնահարում): ԹՅ 5 բաղադրիչներ պահպանել են 2006թ. գնահատականները (դժգոհ և վրեժխնդրորեն տրամադրված խմբեր, տնտեսական ճյուղերի անհավասարություն, «պետություն պետության մեջ» վտանգ, խմբային (կլանային) ընտրանի, այլ պետությունների կամ արտաքին այլ միջամտություն): Վատթարացում է արձանագրված ԹՅ միայն մեկ բաղադրիչով՝ «Փախստականների և ներքին տեղահանումների տեղաշարժ», որի 2007թ. գնահատականը կազմել է 7.6 միավոր՝ 2006թ. 7.1 համեմատ:

ԱՀՀ կամ ՔԱՀ կանխատեսումային արդյունքներին անդրադառնալը դուրս է սույն հոդվածի անմիջական խնդրից: Սակայն այս բաժինն անհրաժեշտ ենք համարում եզրափակել հետևյալ դիտարկմամբ:


Պետությունների «թուլությունը» մոդելավորող և/կամ կանխատեսող կազմակերպություններին բնորոշ է մի առանձնահատկություն, որը դրանք հստակորեն տարանջատում է զուտ «գնահատողներից»: Իրոք, որպեսզի կատարվող կանխատեսումները լինեն իրական (ի վերջո, դրանով է պայմանավորված այս տիպի կազմակերպությունների և խմբերի հեղինակությունը), անհրաժեշտ է, որ կատարված ուսումնասիրություններն ու գնահատումները լինեն հնարավորինս օբյեկտիվ և համարժեք: Այս առումով չափազանց հատկանշական է այն հանգամանքը, որ զուտ «լեզվիտիություն» կամ նույնիսկ «ժողովրդավարություն» տիրույթների պարամետրերի դիտարկումն այս տիպի կազմակերպություններում ունի շատ ավելի «մեղմ» բնույթ, քան դա տեսնում ենք զուտ «գնահատողների» մոտ: Այս առումով, բավական է համեմատել ԱՀՀ կամ ՔԱՀ վաղ փուլերի ուսումնասիրություններում դիտարկվող պարամետրերը և դրանց գնահատումը, օրինակ, ԳԶԿ, ԹՊԱԱԿ, Բրուքինգս հաստատության կամ Բերթելսման հիմնադրամի հետ:

Եզրակացություններ

Մենք նպատակ չունեինք հողվածում պատասխանել «արդյո՞ք ուժեղ երկիր է Հայաստանը» հարցին: Մեր նպատակն ավելի նեղ էր ու համահունչ «Նորավանք» ԳԿՀ «Հայաստան-Տարածաշրջան-Աշխարհ» խորագրին. այն է՝ փորձել պատասխանել «արդյո՞ք ուժեղ երկիր է Հայաստանն այս հարցով ներկայումս զբաղվող մասնագիտական կառույցների ու միջազգային կազմակերպությունների գնահատականներով» հարցին: Ստորև բերվող պատասխանը համարժեք ընկալելու համար անհրաժեշտ է նախ ձևակերպել հետևյալ ընդհանուր բնույթի եզրակացությունները.

1. Մասնագիտական կառույցների կողմից պետությունների «ուժեղության» կամ «թուլության» գնահատումները վերջին 30 տարիների ընթացքում էական փոփոխություն են կրել՝ թե՛ կիրառվող մեթոդների, թե՛ բովանդակային և թե՛ նույնիսկ դրանց ընդհանուր «փիլիսոփայության» առումներով: Վերջին տասնամյակների երկու հիմնական իրադարձությունները՝ ԽՍՀՄ փլուզումը և ԱՄՆ-ում 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչությունը, իրենց աշխարհաքաղաքական հետևանքներով հանդերձ, այս ուսումնասիրությունները հստակորեն բաժանում են երեք հիմնական փուլերի:
2. Ուսումնասիրությունների առաջին փուլը, որը կարող ենք անվանել «*Լատենտային*», «ծպտյալ» կամ «վերլուծական», ավարտվում է ԽՍՀՄ փլուզումով: Այս փուլում մեծ ուշադրություն էր դարձվում պետությունների այնպիսի բնութագրական տիրույթներին, ինչպիսիք են ռազմական հզորությունը, մոբիլիզացիոն ունակությունը, գիտատեխնոլոգիական ներուժը, ռեսուրսային բազան, բնակլիմայական պայմանները և աշխարհագրական նկարագիրը, տնտեսությունը, սոցիալական լարվածությունը և այլն: Ուսումնասիրությունների այս փուլը բնութագրվում է ընդհանուր վերլուծական խորությամբ, ոչգծային վերլուծության և համակարգչային մոդելավորման ամենաարդիական մեթոդների կիրառմամբ, դիտարկվող պարամետրերի բազմազանությամբ և չեզոք քաղաքական «արժեհամակարգի» առկայությամբ: Պետությունների «թուլությունն» այս փուլում գրեթե հոմանիշվում է այս կամ այն տիպի «ճգնաժամի» և/կամ «ձախողման» հնարավորության հետ միայն: Իսկ «ժողովրդավարության» կամ «լեգիտիմության» տիրույթների պարամետրերը կամ ընդհանրապես չէին դիտարկվում, կամ դիտարկվում էին հպանցիկ: Անցյալում, բաց մնումը հայտնված որոշ միջնորդված տվյալներից դատելով, այս փուլի

- ուսումնասիրություններում XX դարի 80-ականների սկզբից նկատելի է «մոդելավորումից–կանխատեսում» շեշտադրումների փոփոխությունը:
3. ՔԱՀ [3] աշխատության 1994թ. հրապարակումով կարելի է սահմանել ուսումնասիրությունների 2-րդ՝ «*հրապարակային*» փուլի գալուստը: Ավելի քաղաքականացված լինելով՝ այն զգալիորեն զիջում է նախորդին իր վերլուծական խորությամբ, ընդգրկունությամբ և համարժեքությամբ: Ռեսուրսային, մոբիլիզացիոն, ինչպես նաև զուտ ռազմական և գիտատեխնոլոգիական տիրույթները մղվում են 2-րդ, եթե ոչ 3-րդ պլան՝ հրապարակային ուսումնասիրություններում և բաց աղբյուրներում առնվազն: Դրա փոխարեն առաջին պլան է մղվում «քաղաքականություն կերտողների» առաջարկած «*ժողովրդավարություն*» տիրույթի տարատեսակ պարամետրերի գնահատումը: Այս փուլում «ուժեղ» պետությունը հոմանիշվում է «արդյունավետ», «կարող» և «*ժողովրդավար*» պետության հետ: Իսկ փուլի ամենաակնառու առանձնահատկությունը, հենց ինքը՝ հրապարակայնությունը, դառնում է «*ժողովրդավարության քարոզչության*» ռազմավարության հատկանշական տարր՝ համահունչ «մոդելավորում–կանխատեսում–կանխարգելում» բանաձևին:
4. Վերջապես, աշխարհաքաղաքական և քաղաքակրթական «մահմեդական մարտահրավերը» և 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչությունը ԱՄՆ-ում ձևավորեցին խնդրո առարկա ուսումնասիրությունների ներկայիս 3-րդ՝ այսպես կոչված «*կիրառական*» փուլի սկիզբը: Այն բնութագրվում է պետությունների «թուլությունը» գնահատող որոշ կազմակերպությունների և զարգացած երկրների արտաքին օժանդակումը (մասնակիորեն նաև արտաքին քաղաքականությունը) իրականացնող պետական կառույցների հատկանշական միահյուսությամբ: «*ժողովրդավարություն*» տիրույթի գնահատականներն ընդլայնվում են մինչև «լեգիտիմություն», ռեսուրսա-միջավայրային տիրույթում գերակշռում է զուտ էկոլոգիական պարամետրերի քննումը, իսկ ռազմական, գիտական, տեխնոլոգիական և այլ տիրույթները շարունակում են մնալ ստվերում: Կարևորվում է «ենթակայություն (արտաքին) ներագդմանը» պարամետրերի դիտարկումը: Այս փուլի գործունեությունը կարելի է բնութագրել «մոդելավորում–կանխատեսում–անմիջական ներագդում» բանաձևով: Դիագրամում պատկերել ենք վերը դիտարկված այս փուլերը:



* * *

Հաշվի առնելով վերը բերվածը՝ կարելի է ձևակերպել հոդվածի հիմնական հարցի պատասխանը:

Ամբողջացնելով հոդվածում քննվող և բազմաթիվ այլ միջազգային մասնագիտական կառույցների ու կազմակերպությունների վերջին 10-15 տարիներին, ընդհուպ մինչև 2008թ. գնահատականները՝ կարելի է եզրակացնել, որ *Հայաստանի Երրորդ Հանրապետությունը առնվազն «թույլ» երկիր չէ: Իրականում, այն գնահատվում է իբրև մեր տարածաշրջանի «ամենաուժեղ» երկիրը, ավելի «ուժեղ», քան մեր տարածաշրջանի գերտերությունները՝ Իրանը, Թուրքիան և Ռուսաստանը:*

Ընդ որում՝ ավելի տպավորիչ են Հայաստանի «հրապարակային» փուլի գնահատականները, երբ քաղաքական տիրույթը գնահատվում էր «ժողովրդավարության» այս կամ այն պարամետրերով: Հատկապես տպավորիչ են Հայաստանի *տնտեսական* և *անվտանգության* տիրույթների գնահատականները, որոնք և ապահովում են Հայաստանի Երրորդ Հանրապետության առավել «ուժեղությունը» նույնիսկ տարածաշրջանի գերտերությունների համեմատ: Գնահատականները մի փոքր նվազում են «կիրառական» փուլում՝

«լեզվաբանության» տիրույթի պարամետրերի օգտագործման հետևանքով: Մակայն նաև այս փուլի գնահատականներով Հայաստանը տարածաշրջանի «ուժեղ», եթե ոչ «ուժեղագույն» երկիրն է: Բացի այդ, զուտ «գնահատող» կազմակերպությունների համեմատ հստակ է Հայաստանի գնահատականների ավելի բարենպաստ բնույթը «մոդելավորող և/կամ կանխատեսող» կազմակերպությունների կողմից:

Լավ է դա, թե՛ վատ, ուժեղ երկիր է Հայաստանն իրականում, թե՛ ոչ. այս հարցերի պատասխանը ավելի ծավալուն ու բազմապլան զննում է պահանջում:

Հունիս, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Մարջանյան Ա.*, Հայաստան–Տարածաշրջան–Աշխարհ. թվեր և փաստեր, Մաս Ա, «Հերիթըջ ֆաունդեյշն» տնտեսական ազատության ցուցիչներ, «Նորավանք» ԳԿՀ, «Հայաստան» տեղեկագիր, թիվ 1, 2004. էջ 54-84; «Հերիթըջ ֆաունդեյշն» տնտեսական ազատության տեղեկատվի շուրջ, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ դար», թիվ 3 (17), 2007, էջ 19-50, *Марджанян А.*, О ежегодниках индексов экономической свободы «The Heritage Foundation», НОФ «Нораванк», XXI-ый Вэк», No 3 (19), 2008, с 19-50:
2. *Հարությունյան Գ.*, Հայաստանը գլոբալ աշխարհում, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ դար», թիվ 3 (17), 2007, էջ 3-18:
3. *D. Esty, J. Goldstone, T. Gurr, P. Surko, A. Unger*, State Failure Task Force Report. 30 November, 1995.
4. *D. Esty, J. Goldstone, T. Gurr, B. Harff, M. Levy, G. Dabelko, P. Surko, A. Unger*, State Failure Task Force Report. Phase II Findings. 31 July, 1998.
5. *K. Jagers, T., Gurr*, Tracking democracy's Third Wave with the Polity III Data. Journal of Peace Research. 1995, vol 31 (4): p 469-482.
6. *J. Goldstone, T. Gurr, B. Harff, M. Levy, M. Marshall, R. Bates, D. Epstein, C. Kahl, P. Surko, J. Ulfelder Jr., A. Unger*, State Failure Task Force Report. Phase III Findings. 30 September, 2000.
7. *On the Brink: Weak States and U.S. National Security*. J. M. Weinstein, J. E. Porter, S. E. Eizenstat. Commission on Weak States and U.S. National Security, Center for Global Development. 2004.
8. *Steven Radelet*, Challenging Foreign Aid: A Policymaker's Guide to the Millennium Challenge Account, Center for Global Development. 2003.
9. *Alexey Semyonov*, The Millennium Challenge Account: A New Way to Conceive of Foreign Aid? The Andrei Sakharov Foundation. June 25, 2003.
10. *Robert I. Rotberg*, ed. When States Fail: Causes and Consequences. Princeton, Princeton University Press, 2004.
11. Department for International Development (DFID). *Why We Need to Work More Effectively in Fragile States*. London, U.K. 2005.

12. The 2006 Country Indicators for Foreign Policy. Canadian Foreign Policy Journal, vol 13, no. 1 (2006): 1-35.
13. Fragile States Strategy. U.S. Agency for International Development. January 2005. PD-ACA-999. www.usaid.gov/policy/2005_fragile_states_strategy.pdf.
14. *Ashraf Ghani et al., Closing the Sovereignty Gap: An Approach to State-Building* (London: Overseas Development Institute, 2005).
15. *Monty G. Marshall and Jack Goldstone*, "Global Report on Conflict, Governance and State Fragility 2007," *Foreign Policy Bulletin* (Cambridge) 17, no. 1 (March 2007): pp. 3–22.
16. *J. Joseph Hewitt, Jonathon Wilkenfeld, and Ted Robert Gurr, Peace and Conflict 2008: Executive Summary* (College Park: Center for International Development and Conflict Management, University of Maryland, 2008).
17. *Susan E. Rice, Stewart Patrick*, 2008 Index of State Weakness in the Developing World. The Brookings Institution. Washington, DC, USA. 2008.

СИЛЬНОЕ ЛИ ГОСУДАРСТВО ТРЕТЬЯ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ?

Արա Մարջանյան

Резюме

Какова Армения в глазах современного мира, какие у нее достижения и неудачи? В статье, на основе публикаций ряда авторитетных международных структур и организаций, дается оценка государству – «сильное», «слабое», «неудавшееся».

Обобщая эти оценки, а также оценки множества других специализированных структур и организаций за последние 10-15 лет (до 2008г. включительно), делается заключение о том, что Третья Республика Армения по меньшей мере не «слабое» государство. В действительности она квалифицируется как «самая сильная» страна нашего региона, намного «сильнее» таких держав, как Иран, Турция и России.